ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ
Բաց Բաժնետիրական Ընկերություն
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 87 շենք, թիվ 85, հեռ. 54-78-95, ֆաքս 54-78-94, էլ. փոստ
araratbank@araratbank.am
Հաշվետվություն թիվ 05, 02.06.2023թ.

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Խորհրդի 01.06.2023թ. որոշում (որոշում ՈՐԽ0102-13/Լ) ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ բաժնետերերի 2023 թվականի տարեկան ընդհանուր ժողով հրավիրելու և Խորհրդի 2023 թվականի մայիսի 19-ի թիվ 10/Լ որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին:

AraratBank
0002, ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 87 շենք, 85 տարածք (+374)10 59 23 23 info@araratbank.am | araratbank.am

ք.Երևան

Կոդ: ՈՐԽ0102-13/Լ
Դաս: ՀՊ
«01» հունիսի 2023թ.

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ ԽՈՐՀՈՒՐԴ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ ՀՐԱՎԻՐԵԼՈՒ ԵՎ ԽՈՐՀՐԴԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 19-Ի ԹԻՎ 10/Լ ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 84-րդ հոդվածի 1-ին մասի «բ»-ից «ե», «ժգ» կետերը, «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 21^{6}-րդ հոդվածի 1-ին մասի «բ», «ը», «թ» կետերը, ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ կանոնադրության 12.1. կետի «բ», «ը», «թ», «ժէ» ենթակետերը՝ ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ բաժնետերերի 2023 թվականի տարեկան ընդհանուր ժողովը հրավիրել 2023 թվականի հունիսի 27-ին ժամը 11:00-ին՝ ք. Երևան, 0037, Ազատության պողոտա 2/2 շենք հասցեում գտնվող «Ռեդիսոն Բլու Հոթել Երևան» հյուրանոցի 2-րդ հարկի «Armenia ball room» սրահում:
2. ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ բաժնետերերի 2023 թվականի տարեկան ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու օր սահմանել 2023 թվականի հունիսի 01-ը:
3. Նախնական հաստատել և ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի հաստատմանը ներկայացնել ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ 2022 թվականի տարեկան ֆինանսական հաշվետվությունները՝ համաձայն Հավելված 1-ի:
4. Բանկի տարեկան ընդհանուր ժողովին ներկայացնել շահույթի բաշխման առաջարկություն՝ համաձայն Հավելված 2-ի:
5. Հաստատել ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ բաժնետերերի 2023 թվականի տարեկան ընդհանուր ժողովի օրակարգը՝ համաձայն Հավելված 3-ի:

6. Հաստատել ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ բաժնետերերին տրամադրվող տեղեկությունների և նյութերի ցանկը՝ համաձայն Հավելված 4-ի:
7. ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ բաժնետերերի 2023 թվականի տարեկան ընդհանուր ժողով հրավիրելու մասին բաժնետերերին ծանուցել պատվիրված նամակներ ուղարկելու միջոցով՝ համաձայն Հավելված 5-ի:
8. ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ բաժնետերերին տեղեկացնել, որ սույն որոշման 6-րդ կետով հաստատված ցանկում ընդգրկված նյութերին կարող են ծանոթանալ ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ վարչական շենքում (ք.Երևան, Բուզանդի փողոց, 87-րդ շենք, թիվ 85), ինչպես նաև համացանցի Բանկի տնային էջում (www.araratbank.am):
9. Հաստատել օրակարգի հարցերի վերաբերյալ քվեաթերթիկի ձևը՝ համաձայն Հավելված 6-ի:
10. Ուժը կորցրած ճանաչել Խորհրդի 2023 թվականի մայիսի 19-ի «ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողով հրավիրելու մասին» թիվ 10/Լ որոշումը:
11. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**